

Բ Ե Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅՈՑ ԼԵՋՈՒԿ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՏՆԱԿԱՆ

ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

(Շ-Ի-Ն-Ի-Ն-Ի-Ն Լ ԷԷԷ)

Նախ քան Ս. Սահակայ և Մես-
րովբայ զԼստուածաշունչն ի Յունակա-
նէն ի Հայ վերածին, Հայաստանում
գործածական էր միայն Եսորերէն Լս-
տուածաշունչն որ ժողովրդին անհասկա-
նալի էր, ինչպէս կարելի է ստուգել Ս.
Մեսրովբայ Կորին աշակերտից, որ իւր
Եյրուբենից զիւտի պատմութեան մէջ,
գոր գրել էր Հայոց Վառնապուհ թա-
գաւորի հրամանաւ, հետեւալ խօսքերն
է յառաջ բերում. «Աւ այսպէս բազ-
մաժամանակեայ մտածութիւնն՝ երա-
նելոյ առն Մաշթոցի՝ ընկալեալ յա-
մենախնամ մարդասիրէն Լստուծոյ,
զօրացոյց զնա հոգւով ողորմութեան
իւրոյ. քանզի հոգացեալ յարաժամ
տրամէր երանելի այրն Մաշթոց, տե-
սանելով զմեծաջանն ծախս մանկան-
ցն Հայաստան աշխարհիս: Որք բա-
զում թռչալօք և հեռագնաց ճանա-
պարհօք և բազմաժամանակեայ զե-
գերմամբք՝ մաշէին զաւուրս իւրեանց
ի դպրոցս Եսորի զիտութեան. քան-
զի՝ պաշտօն եկեղեցւոյ և կարգացմունք
զրոց Եսորի ուսմամբ վարէին ի Վա-
նօրայս և յԱղեղեցիս Հայաստան ժո-
ղովրդոցս, յորմէ ոչինչ էին կարող լը-
սել և օգտել ժողովուրդքն՝ այսպիսի

«մեծ աշխարհի յանդուլթենէ լեզուին
«Եսորեայ», ⁽¹⁾:

Դեռ ի վաղ ժամանակաց հետէ Հա-
յաստանում գործածութեան մէջ էին
Եսորեոց, Յունաց, և Պարսից այրուբե-
նական նշանադիրք, վասն զի Հայք չու-
նէին դեռ ևս իրենց լեզուի հնչեւները
ճշտօրէն արտայայտելու սեպհական նշա-
նադիրք ⁽²⁾: Դիողորոս Սիկիլիցոյ և քանի
մի Յոյն Պատմաց հետեւելով երևում է
որ առաջինք քրիստոնէութեան թուակա-
նից առաջ կիրարկութեան մէջ էին ար-
դէն ⁽³⁾. հաւանական է որ Ս. Մեսրով-
բայ զտած այրուբենքը մեծ պատճառ ե-
ղան նշանագրաց կիրարկութեան սահմա-
նաւորուելուն և սակաւ ինչ յետոյ բոլո-
րովին անհետանալուն: Գրէթէ այս ժամա-
նակներում էր որ Հայերը Ս. Լեփրեմայ
Լեղեսացւոյ զրուածքը ⁽⁴⁾, Ս. Յակոբայ
Մճբնայ Հայրապետի քարոզները ⁽⁵⁾ և
Եսորի զլսաւոր մատենագրաց զրուածք-
ները ի Հայ վերածին:

Վեցերորդ դարու միջին ժամանակ-
ներում, Մանէս, Թէոդորիոս Մոլի-

(1) Կորին, Ղազար Փարպ. էջ 25, 26:

(2) Եզաթ. էջ 375, 374 Մովս. Խոր. Պատմ. Հայոց. գիրք Գ. գլխ. ԾԴ. էջ 299, 300. — Ղազար Փարպ. էջ 25:

(3) Diad. Sicul. tum. II. lib. XIX. p. 335. edit. voss. — Poliaen. lib. car. 8. § 3:

(4) Ս. Եփրեմի քարոզներ թարգմանութիւն-
քը գտնւում են Երբունի Մատենադարանի
Հայերէն ձեռագրոց մէջ համար 55, 57, 56 և 65:(5) Ս. Յակոբ Մճբնայ Հայրապետի քարոզ-
ների Հայերէն թարգմանութիւնը Լատիներէնի
հետ միասին հրատարակեց Հռովմում Անտոնել-
լի Կարդինալը 1. հատ. in folio 1756:

սուկասցի, Պօղոս Սամոսացի հերետիկոսաց գրուածքները Հայաստան բերուեցան Նեստորականաց շարագրեալ շատ գրուածքներով և ին ու Նոր Ատակարանաց անվաւեր գրքերով, ինչպէս Յայտնութիւն Ս. Պետրոսի, Օղջումն Ադամայ, Աւետ սրան մանկութեան և հերետիկոսաց քահանայից ջանիւք ի Հայ թարգմանեցան, այդ քահանայք իրենց կարծեաց համար հարկադրուած էին թողուլ Ասորիք¹⁾: Իննեւորդ դարու սկզբներում, Նանա անուն Աւագ Սարկաւաղը ընդունեց Հայկական Ափեղեցւոյ դաւանութիւնը և գնաց Տարօնայ իշխան Բագարատայ արքունիքը, որ Բագարատայ Խալիֆների կողմից զլեւաւոր կառավարիչ էր նշանակուել իւր Հայրենեաց²⁾: Նանա Աստուածաբանական մի քանի գրուածք ևս թարգմանեց ի Հայ բարբառ: Վերջապէս առ մեզ Արքունի Մատենադարանում կայ նոյնպէս Յիսուսի 1245 և Հայոց 694 թուականում Անտիոքայ Յակոբիկ Միքայէլ Պատրիարքի յօրինած Տիեզերական Պատմութեան թարգմանութիւնը: Այս Պատրիարքը փոխեցաւ յաստեալս երկոտասներորդ դարու վերջերում³⁾: Այս ժամանակագրական պատմութիւնը, որից շատ յաճախ գրուատեօք

վիայութիւններ է բերում Պրիգոր Աբուլ Ֆարաձը⁴⁾ իւր Ասորիքէն գրուած Տիեզերական Պատմութեան մէջ, բոլորովին անծանօթ էր Աստեմանի գիտականին և նորա սկզբնական բնագիրը, որքան ինձ յայտնի է, չկայ Աւրոպիոյ ոչ մի մատենադարանում:

Հայերէն գրոց մէջ միայն կարելի է յուսալ հարադատ ծանօթութիւնք կամ տեղեկութիւնք գտնել, որովք հնար կրէնի ծանօթանալ Սասանեան ցեղի Պարսկաստանի թագաւորաց պատմութեան և նախնի Պարսից այն է Օրադաշի ազանդաւորաց կրօնական կարծեաց հետ: Հայաստանի տէրութեան բարձմանէն ըզկնի, մոգերը ետեւէ էին Պարսկաստանի թագաւորաց պաշտպանութեամբն և զօրութեամբ Հայաստան մտնել ուր և հաստատել իրենց կրօնը, իսկ Հայաստանի Աստուածաբանք բազմիցս հարկադրուած գրաւոր կերպիւ էին պաշտպանում իրենց կրօնքը՝ մոգաց դէմ, որպէս զի այդ եղանակաւ արգիլեն Հայ իշխաններն օտար գաւանութեան զիրիւր դիմելու, բայց չենայելով այս մեծածիգն աշխատութեանց՝ նոցանից մեծ բազմութիւն մի աշակերտեցաւ նոցա ուսմանց²⁾: Այս վիճաբանական գրուածքն են ահա յորս բազմութիւ տեղեկութիւնք և աւանդութիւնք կարելի է գտնել և որոնք կարեւոր են այն պատճառաւ մանաւանդ որ նոյն ժողովրդի մէջ բնակուող և նորա կրօնից դէմ մաքառող մատենագրաց աշխատասիրութեանց

(1) Սամուէլ Անեցւոյ Ժամանակագրութիւն, ձեռագիր Հայոց. համար 96. fol. 24 verso.

(2) 2ածխան. Հայոց Պատմ. հատ. Բ. գիրք Գ. զլիս. ԿԻ. էջ 441 զլիս. Է. էջ 451. գիրք Դ. զլիս. Ե. էջ 678. զլիս. Բ. էջ 685.

(3) Այս ժամանակագրութիւնը մեր Արքունի մատենադարանում գտնուած համար 90 Հայերէն ձեռագրում 220 երեսից է բաղկացած in folio.

(1) Pag. 2 et passim.

(2) Եղիշէ և Ղազար Փարպեցի. passim.

մէջ ինն գտանուում: Հայկական կղերի ամենանշանաւոր անձինք ինչպէս Ազնիկ, Արծան Արծրունի և ուրիշ շատերը այս առարկայի մասին շատ գրուածքներ ունին, որք կան ևս մինչև ցայսօր: Աղիշէի հինգերորդ դարու միջին ժամանակներում գրած Վարդանանց Պարսից դէմ բացած պատերազմի պատմութեան մէջ, Վեհ — Միհր — Ներսէս Հայաստանի Պարսիկ կառավարչի պատուէրը կայ, որով յորդորումէ զՀայս Ռարաշառի կը բռնը ընդունելու¹): Այս պատուէրը շատ ընդարձակ մեկնութիւն է բովանդակում իւր մէջ Պարսից աստուածաբանական վարդապետութեան վերաբերութեամբ: Բայ ի մեր յիշած գրուածքներից, Հայերն ունին դեռ ևս շատ Աստուածաբանական աշխատութիւնք, որոնց նը պատակն է հերքել այն զանազան հերետիկոսաց և աղանդաւորաց մոլորութիւնքը՝ որոնք Հայաստանում և Միջագետքում յայտնի են Աբու-Դաւիթ, Թոմար, Լեյլի, որ յառաջ է եկել Թոմարակայ Ղազար անուն մեկից որ տասներորդ դարու վերջերումն էր ապրում, Թոմարի, Թուրքլ անուն քաղաքից, Խնուսի, Խնուս քաղաքից, որ Ափրատայ միւս կողմն էր բնակում, Համի, Սաբէն, Հարաբէ, և ըն. անուանակոչութեամբ. սոքա երեւումն որ Ասիոյ հին ժողովրդոց կրօնական կարծիքներն են պահպանել: Այս աղանդաւորը շատ հաւանական է որ Բարդաճանայ, Մարկիոնի, Վաղենաթանոսի

և Մանէկի աշակերտաց հետեողքն եղած լինին, որոնք շատ երկար ժամանակ պահպանել են իրենց զօրութիւնը և բաղմութիւնը Ազնիկայում, Հարանում և Միջագետքի միւս մասերում¹): Թեպէտ զանազան ժամանակներում շատ արիւնալից նեղութեանց և հալածանաց²) են ենթարկուել սոքա, սակայն երեւում է որ դարձեալ կան դեռ ևս Հայաստանում, Խնուս քաղաքի կողմերում և Միջագետքում, ուր Ազնիկ են կոչում նոցա:

Չնայելով մեր թուած Հայկական գրականութեան բազմաթիւ օգուանները, այնու ամենայնիւ անձանօթ էր մնացել Աւրոպայի այդ գրականութիւնը մինչև մեր օրերը: Հատ դժուար է ճշմարտապէս որոշել այս անտարբերութեան պատճառները զորս ցուցիւ են այդ գրականութեան վերաբերութեամբ: Բաւարանաց և ՐԱ կղերական գրոց պապատութիւնը, նոյն և առ մեզ արքունի Մատենադարանում գտնուած ձեռագրաց սակաւութիւնն անկասկած զխաւոր պատճառք են վերոյիշեալ անտարբերութեան. բայց ադ պատճառք ևս անզօր են կատարեալ մեկնութիւն տալու մեզ, վասն զի այդ պատճառք հաւասարաբար պիտի խոտորեցուցանէին զմեզ և միւս արեւելեան ազգաց գրականութեան ուսումնասիրութիւնից: Մեր կարծեօք այդ անտարբերութեան նպաստեցուցիչ մի հզօր պատճառն էր այն ստրկական վիճակը, յորում գտան-

(1) Assemani, Bibl. Orient. tam. 1. p. 118, 145 —Gottligner. Hst. Orient p. 174 175.

(2) Չափ. Հայոց Պատմ. հատ. Բ. գիրք Դ. զէս. ԼԳ. էջ 884 - 896.

(1) Եղիշէ, Վարդանանց Պատմ. Գլխ. Բ. էջ 23. 24. 25. և հատ. քառաճառ Կ. Պոլիս, 1764 թ.

ւում էր Հայաստան մինչև մեր օրերը, երբ եօթնևտասներորդ դարու միջին ժամանակներում, Աստուածաշնչի գրականութիւնն սրևելագիտաց աշխատասիրութեանց միակ նիւթ լինելուց դադարեցաւ և սկսեցին Ասիական լեզուաց իսկ գրականական նպատակաւ ուսումնասիրութիւնը: Ի վաղուց հետէ, Հայք իրենց անկախութեան հետ կորցրած էին և այն քաղաքական կարգը, զոր իրաւունք ունէին ունիլ միւս Ասիական ազգերի շարքում իրենց երկրի մեծութեան և կարևորութեան վերայ հիմնուելով: Եւստղբովուար է ներկայացնել մինչև անգամ թէ ինչպէս ժողովուրդ մի, որոյ մեծ մասը Սահմեռականաց լծոյ տակ, միւսն աստանդական և հին աշխարհի ամենայն մասերը ցրուած գրականութեամբ պարապել կարողանար և անխախտ պահպանել այնպիսի դիմնական մի լեզու, որ ի վաղուց անտի ողորջուած և մշակուած է ամենայն տեսակ բազմաթիւ գրուածքներով: Ամեն ուրեք Հայոց առ վաճառականութիւնն ունեցած ճաշակը Հրէից հետ շփոթելու պատճառ է հանդիսանում և նոցա Բարբերէն, Պարսկերէն և թուրքերէն բառերով և ոճերով լի աշխարհիկ բարբառը արգելում և դժուարացնում է զնոսա իրենց վերայ իշխող ժողովրդից որոշելու: Եւ այսպէս այն անիրաւութիւնը զոր արել են Հայերին, պատճառ դարձաւ առաւել ծանր անիրաւութեան՝ զոր գուցէ շատ երկար ևս կշարունակեն առնել նոցա գրականութեան:

Ս. Մ.

ՊԱՏՄԱՌԹԻՒՆ ԵՒ ՕԳՈՒՏ ՆՈՐԱՆ

Ամենայն լուսաւորեալ ազնիւք՝ գիտութիւն կառնի օգտակարագոյն մարդկայինս սեռի, ծանան զպատմութիւնն. Սկիւրոն անուանէ զայն — լուսաւոր ճշմարտութեան, մարդիչ կենաց, և վկայ ժամանակաց. Պոսուէ — հանճարեղ խորհրդատու արքայից. Փլիչէ — բարոյականութիւն գործնական. Բողիկարոն — նիւթ խուզարկութեան փլիշտփայութեան. իսկ Արամիլն ասէ՝ «լստ քանի մի իմաստից առեալ, պատմութիւնն է նուիրական մատնան ազգաց, մատնան վսեմ և կարևորագոյն. վսեմ զի զժազուսն նոցին և վարար, զբոյս բարուցն, և զկենցաղ իրր ի հայելոյ պատկերադրէ. և թէ՛ պատմութիւնն է պատգամ յանցելոցն հնոց եկելոցն աւանդեալ, բացատրութիւն ներկայի, և օրինակ խրատուց ապագային, և Յետ զայս այսպէս ընդունելոյ և անտեղի անգամ թուի ասել պատմութեանն հմտութիւն զոր շահ բերէ մարդոյն:

Էր երբեմն՝ յորժամ անուամբս «պատմութիւն», իմացեալ լինէր զզրի հարկանել միայն անց մանունս և մասնաւորս, և նոցուն միտ դնելոյ հրմտութեան հարկ և պարտ բանասիրացն միայն պահեալ էր, որոց կամ էր ի քնին Լատին և Յոյն հեղինակացն պարագել: Էր երբեմն՝ յորժամ անուամբս «սրտմութիւն», իմացեալ լինէր յուշի ունել միայն զանուանս և զթուականելս, էր և երբեմն, զի պատմութիւնն ի կարդի գիտութեանցն զվերջինն ունէր տեղի. կամ բազում անգամ այն էր, զի և ոչ իրաւունս գրէին նմա անուն և տեղի գրաւել ի նոսա. վսեմ զի ոչ այլ ինչ համարեալ էր, բայց նիւթ մանկական զբաղման արժանի. այլ իբրեւ յարբունս ժամանակաց տակաւ առ տակաւ բանականութիւն մարդկային, գիտացին և հաւատացին ամենեքին թէ զայգալիսի պաշտօն և սպաս որոշել նմին զյարդ գիտութեանդ կորուսանէ, և վսեմ՝ ճակատագրի նորին ընդդէմ զինի տգիտարար. քանզի բուն նպատակ գիտելոյ զպատմութիւն, ոչ զհետաքրքրութիւն յագնցուցանել է և ոչ զանցս չընչինս կամ մանունս ևս և զանուանս և զթուա-